

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
2015-2016 ուսումնական տարի
5-6 տարեկանների ուսուցում. «Իմացումի հրճվանք»
Ուսումնական պլան

Ուսումնական պլանի բաղադրիչներն են.

- մայրենի խոսքի զարգացում
 - երգ-պար
 - թվաբանություն
 - բնագիտություն
 - կերպարվեստ և տեխնոլոգիա
 - մարմնակրթություն
 - ռուսերեն, անգլերեն
 - մեդիատեխնոլոգիաներ
1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր), սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
 2. Կրթական ծրագիր ընդունվում է այն երեխան (այսուհետ՝ սովորող), ում 5 տարին լրանում է մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է ծրագիրը և սահմանված կարգով կնքում պայմանագիր ուսումնառության մասին:
 3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է:
 4. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի և ուսկենտրոնի ղեկավարների միասնական ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
 5. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը, սովորողը դպրոցում գործածում են սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական ներթուրք-նոթբուք կամ պլանշետ, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար ինտերնետից, համակարգչից, էլ.գրատախտակից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
 6. Մեդիագրադարանը, դպրոցի գրադարանը, դասվարի բլոգը սովորողին տանը, դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:

7. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի, դասարանի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանցով են որոշվում ուսումնական գործունեությունները, ստուգատեսները, ծեսերը և տոները:
8. Սովորողի ֆիզիկական-ֆիզիոլոգիական, առողջական, սոցիալական վիճակի տվյալները, դրանց փոփոխությունները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
9. Ուսումնական շաբաթը 5-օրյա է:
10. Գործունեության բոլոր ձևերը միավորվում են «Իմացումի հրճվանք» ծրագրում, որը ղեկավարում է դասվարը:
11. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 թույն տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:
12. «Իմացումի հրճվանք» ծրագիրը ներառում է շրջապատի կամ նյութական միջավայրի խնամքին ուղղված նախագծեր, ամենօրյա ինքնասպասարկում:
13. Ուսումնական գործունեության կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում է հեռավար-ընտանեկան ուսուցման ձևը:
14. Մայրենի խոսքի զարգացումն իրականացվում է անընդհատ՝ խթանելով սովորողի ինքնարտահայտվելու ցանկությունը:
Թատերական, երաժշտական խաղերը, ներկայացումները, բանաստեղծությունների բերանացի անելը, հեքիաթների ունկնդրումն ու քննարկումները խոսքի զարգացման կազմակերպման ձևեր են:
Գրավոր խոսքի ուսուցումն ու զարգացումը կազմակերպվում է երկրորդ կիսամյակում՝ բանավոր գործունեությանը զուգահեռ՝ անընդհատ բավարարելով սովորողի գրել-կարդալու պահանջն ու անհրաժեշտությունը:
15. Անգլերենի և ռուսերենի ուսուցումն իրականացնում են առաջին կիսամյակում դասվարը՝ մոլտֆիլմերի, ուսուցողական ֆիլմերի, երգերի ունկնդրմամբ, էլեկտրոնային խաղերով, երկրորդ կիսամյակից, անգլերենի, ռուսերենի ուսուցիչները:
16. Բնագիտական գործունեությունը կազմված է «Իմ խնամած բույսերը», «Իմ խնամած կենդանիները» ուսումնական նախագծերից: Բնագիտության ուսուցում իրականացվում է նաև բնության, բնական երևույթների ամենօրյա դիտարկումների, ուսճամփորդությունների միջոցով:
17. Թվաբանությունն ամենօրյա գործունեություն է՝ բանավոր հաշվարկի, չափումների, համեմատությունների, համադրումների և հակադրումների ձևով:
18. Երաժշտական գործունեությունը ներառում է երգ, պար, երաժշտության ունկնդրում, ռիթմիկա-շարժում, երաժշտական գործիքների հետ ծանոթացում, երաժշտական խաղեր:
19. Մարմնակրթությունն իրականացվում է ամենօրյա մարզական գործունեությամբ՝ մարմնամարզություն, լող, հեծանվավարություն մարզական և բակային խաղեր: Լողալ կարողանալը պարտադիր ուսումնական կարողություն է, որ կազմակերպվում է սահմանված կարգով:

20. Կերպարվեստ և տեխնոլոգիա գործունեությունը ներառում է նկարչությունը, ծեփը, խոհանոցային, բակային աշխատանքի, շրջակա միջավայրի խնամքի և ինքնասպասարկման աշխատանքի, ծեսերի, ներկայացումների, խաղերի, ստուգատեսների ընթացքում ձեռք բերած հմտությունները:
21. ՏՀՏ-ն հմտությունները ձեռք են բերվում ուսումնական գործունեության ընթացքում:
22. Լրացուցիչ կրթությունը դաշնամուրի, պարի, թատրոնի, կերպարվեստի, խեցեգործության, շախմատի, լողի, մարմնամարզության, թեթև ատլետիկայի ուսումնական գործունեությունն է, որոնց կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված:
23. Ամբողջ գործունեությունը սահմանված կարգով կազմակերպվում է հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
24. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները ուսումնական գործունեության բաղկացուցիչն են:
25. Կրթական ծրագիրն ապահովում է սովորողի ամբողջական ներառում:
26. Սովորողի ուսուցում-զարգացումը կազմակերպվում է նաև տանը՝ ընտանեկան նախագծերի միջոցով, ծնողների մասնակցությամբ:
27. Սովորողների ամենօրյա գործունեությունը դասվարը պարբերաբար ներկայացնում է իր ուսումնական բլոգում, անհատական արժեքային համակարգի, հմտությունների, կարողությունների որակական բնութագիրը, ցուցանիշները, ծնողի մասնակցությամբ, գրանցում է սովորողի աճի և զարգացման դիտարկման թերթիկում:
28. Սովորողի ուսումնական գործունեության այլ արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ստուգատեսներում, ներկայացումներում, ցուցահանդեսներում:
29. Հունիս-օգոստոս ամիսներին սովորողը կարող է մասնակցել «Ամառային պարտեզ» ծրագրին: